ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 1

“……” ……. 2016թ. N……

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ք. ԵՐԵՎԱՆ, ԲՈՒԶԱՆԴԻ 1/3, 31 Շ., 4-ՐԴ ՀԱՐԿ

Հարգելի Լիանա Դոյդոյան,

Ի պատասխան Ձեր ս.թ. մայիսի 17-ի թիվ 281-ի 8 գրության՝ հայտնում ենք հետևյալը.

1. ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է 2013 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 47-2 արձանագրային որոշման համաձայն: Միևնույն ժամանակ, հարկ եմ համարում նշել, որ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկություն ստանալու հարցումներն առանձնացված չեն քաղաքացիների դիմում-բողոքներից, քանի որ նման օրենսդրական պահանջ չկա: Ավելին, <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանվել է, որ <<*Գրավոր հարցումների գործավարությունն իրականացվում է քաղաքացիների դիմումների և բողոքների համար օրենսդրության սահմանված կարգով՝ գործավարության մյուս ձևերից առանձին*>>: ՀՀ միջազգային

տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկատվություն ստանալու հարցումները և քաղաքացիների դիմում-բողոքները տարանջատված են գործավարության մյուս ձևերից: ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշման 1-ին հավելվածի 7-րդ կետով սահմանվել է, որ << *Թղթային տարբերակով, հարցումն ուղարկած անձի (այսուհետ՝ դիմող) էլեկտրոնային փոստային հասցեից, նյութական կրիչին գրանցված վիճակում կամ տեղեկատվություն տնօրինողի պաշտոնական կայքի «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժնից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվող անհրաժեշտ տեղեկատվությունը լրացնելուց հետո՝ ստորագրությամբ, էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ նույնականացման քարտի միջոցով տվյալ մարմին ուղարկված հարցումները, ստացման օրը,* ***տվյալ մարմնի ներքին գործավարության կարգին համապատասխան****, մուտքագրվում են տվյալ տեղեկատվությունը տնօրինողի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ և* ***շրջանառվում այդ կարգի համաձայն****:...>>*

2. ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում տեղեկություն ստանալու գրավոր հարցումները ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշմամբ սահմանված կարգով գրանցվում և դասակարգվում են՝ համաձայն 2013 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 47-2 արձանագրային որոշման, որի հիման վրա ներկայումս հաստատման փուլում է գտնվում ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության աշխատակազմի ներքին գործավարության կարգը: Տվյալ կարգով կանոնակարգում են վերոնշյալ հարցերը, ինչն արդեն իսկ փաստացի իրականացվում է համաձայն 2013 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 47-2 արձանագրային որոշման: Հարկ եմ համարում նշել նաև, որ ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարության

աշխատակազմի տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 1204-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 8-րդ կետի համաձայն իրականացվում է վիճակագրություն՝ ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների: Վիճակագրական տվյալներն առնվազն պարունակում են ստացված հարցումների ընդհանուր թիվը և տեսակը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ?????? ????????? **ՍԵԴՐԱԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Կատարող՝ Արտակ Ղազարյան
Հեռ.՝ 011880803